ՀՀ ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՎՐԱ ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Պ.Գ. Դավթյան, Ա.Հ. Հովհաննիսյան, Ե.Ս. Մանուկյան, Տ.Պ. Դավթյան, Ա.Հ. Վարդանյան

ԵՊՀ, ՀՀ ք. Երևան, qartez-geomorfolog@mail.ru

Հասարակության կայուն զարգացումը ապահովելու կարևոր գործոններից է գյուղատնտեսության զարգացումը, որը ապահովում է բնակչության առաջին անհրաժեշտության պարենային արտադրանքով:

Գյուղատնտեսության համար աշխատանքի առարկան հողն է, որի պահպանումը և բարելավումը կարևոր գործոն է գյուղատնտեսության զարգացման համար: Ցավոք հողերի ոչ ճիշտ օգտագործումը, դրանց անընդհատ շահագործումը մի կողմից, մյուս կողմից բնական գործոնների ազդեցությամբ տարեց տարի դրանք դեգրադացվում են և դուրս գալիս գյուղատնտեսական նպատակներով օգտագործման ոլորտից:

Վերոհիշյալը հույժ կարևոր հիմնախնդիր է կախված երկրի բնակչության ուսերից: Խնդիրը առավել սրվել է վերջին տասնամյակներում, հատկապես լեռնային և տաք ջերմային գոտիներում գտնվող երկրներում, երբ այն քննարկվում է կլիմայի գլոբալ տաքացման համատեքստում: Պարզ է որ նման երկրներից է նաև ՀՀ-ը, որտեղ առկա են վերոհիշյալ խնդիրները:

Հողերի դեգրադացիայի վրա մեծապես ազդում են և բնական և մարդածին գործոնները, իսկ երբ հողերի դեգրադացիան տեղի է ունենում նշված գործոնների համադրությամբ ապա հողերի կորուստը դառնում է մեծածավալ և ունենում անդառնալի հետևանքներ:

Մեր աշխատանքում անրադարձել ենք հողերի դեգրադացիայի վրա անտառների բնական և մարդածին դեգրադացիայի ազդեցության գնահատմանը, քանի որ այս դեպքում կարող ենք ցույց տալ բնական և մարտածին գործոնների համադրված ազդեցության ծավալներն ու վտանգավորության աստիճանը: Որպես ուսումնասիրման օբյեկտ ընտրել ենք ՀՀ Լոռու մարզը, ուր առկա են մեզ հետաքրքրող բոլոր գործոնները:

Անտառները Լոռու մարզում զբաղեցնում են 928,77 կմ^2 տարածք կամ մարզի ամբողջ տարածքի 24,5%-ը: Սրանք հիմնականում տարածված են Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց լեռնաշղթաների լանջերին՝ 600մ-ից մինչև 2200մ բարձրություններում: Տարածքի արևմտյան և հյուսիսարևմտյան շրջաններում անտառներ գրեթե չկան, ոչ մեծ պուրակներ հանդիպում են Բազումի լեռնաշղթայի հարավային լանջերին, Տաշիր, Ուռուտ, Չիչկան գետերի ավազաններում: Անտառները մարզում ունեն հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն:

Դեգրադացիայի աստիճանը բացահայտելու համար մեզ առավել շատ հետաքրքրում է անտառների բնական և արհեստական դեգրադացիան, որը ներկայացված է անտառահատումների ձևով, որի արդյունքում հսկայական չափերի է հասել հոսքի գործակիցը, լեռնալանջերի լվացումը և լերկացումը, որոնք էլ հողերի դեգրադացիայի կարևոր գործոններ են: Մարզի տարածքում ամենավտանգավոր երևույթն անտառների դեգրադացումն է, որի պատճառը մի կողմից անօրինական անտառահատումներն են, մյուս կողմից անտառապահպան միջոցառումների, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի բացակայությունը: Առավել վտանգավոր չափերի են հասնում անտառահատումները: Բավական է նշել, որ հատված անտառների ծավալները երեք անգամ գերազանցում են բնափայտի տարեկան վերարտադրությանը:

1991-2015թթ տվյալներով մարզի անտառներում գրանցված է 12500հա անօրինական անտառահատում և մոտ 18000հա ծառերի վիճակի վատթարացում (ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ.):

Համոզվելու համար տվյալների հավաստիությանը, օգտագործել ենք Գ.Պ.Թադևոսյանի կիրառած մեթոդը (Թադևոսյան Գ.Պ. 2005,):

Մեր կողմից Փամբակ, Գուգարաց և Բազումի լեռների անտառապատ լանջերին կատարվել է ակնադիտական ուսումնասիրություններ:

Ընտրել ենք փորձարարական դաշտեր և հաշվել հատված ծառերի քանակը, այնուհետև ստացված տոկոսային թվերը ամբողջ տարածքի համար ընդունել որպես բնութագրիչ ցուցանիշ, ինչը հնարավորություն է տվել բավարար ճշտությամբ առանձնացնել և գնահատել անտառահատումների հետևյալ տիպերը՝ համատարած հատված անտառ, երբ հատումը կազմել է ավելի քան 75%, ինտենսիվ հատված անտառ՝ 50-75%, միջին չափերի հատված անտառ՝ 25-50%, մասնակի հատված անտառ՝ մինչև 25%: Այս բաժանման հիման վրա էլ ARC MAP, ARC GIS համակարգերում կազմել ենք Լոռու մարզի հատված անտառների քարտեզը (նկար 1):

Քարտեզի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել շատ են տուժել Տանձուտ, Վահագնի, Անտառամուտ, Ալարեքս և Մարց գետերի ավազանների անտառները, որոնք ավելի քան 50%-ով հատված են, իսկ տեղ-տեղ՝ ամբողջությամբ: Համատարած հատվել են նաև լեռների հարավահայաց լանջերի պուրակները: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ անտառահատումների հետևանքով ոչնչացել է մոտ 300-320 կմ^2 ընդհանուր մակերեսով անտառ: Առանձնացված խմբերն էլ բնութագրում են անտառահատումների հետևանքով դեգրադացված տարածքները:

Պետք է նշել, որ մարզում նկատվում է անտառահատումների ուրույն ձև, որի էությունը հետևյալն է. անտառածածկ մակերեսը ընդհանուր առմամբ պահպանվում է, բայց նկատվում է անտառների նոսրացում, ինչը իր հերթին նպաստում է այլ նեգատիվ երևույթների առաջացմանը, մասնավորապես դեգրադացիա մեկ այլ գործոնի անտառային հրդեհների առաջացմանը:

Անտառային հրդեհները անտառների ոչնչացման առավել վտանգավոր ձևերից են: Եթե անտառահատումների հետևանքով դեռևս երկար ժամանակ կարող է պահպանվել անտառատակ բուսականությունը, ինչը կարող է արգելակել հողերի դեգրադացիան, ապա հրդեհների պատճառով լիովին ոչնչանում են նաև անտառատակ բույսերը, որի արդյունքում բացվում է հողի շերտը ենթարկվելով ակտիվ լվացման ու տեղատարման: Անկանոն անտառահատումները և անտառապաշտպանական միջոցառումների բացակայությունը հանգեցրել են անտառներում միկրոկլիմայական պայմանների փոփոխության, որի պատճառով բարձրացել է անտառի օդի ջերմաստիճանը, առատ լույսը և հատման հետևանքով թափված ճյուղերն ու տերևները: Ծառուտների չորացումը նպաստավոր պայմաններ է ստեղծել հրդեհավտանգավորության բարձրացման համար: Օգտագործելով Լալվարի անտառտնտեսության տվյալները՝ (http://hayantar.am) առանձնացրել ենք հրդեհավտանգավորության հինգ դաս և կազմել Լալվարի տարածաշրջանի անտառների հրդեհավտանգավորության սխեմատիկ քարտեզ (նկար 2):

Համեմատելով ստացված սխեմատիկ քարտեզը անտառահատման քարտեզի հետ՝ (նկար 2) պարզ նկատվում է, որ նրանք համընկնում են:

Հրդեհավտանգ առաջին դասը, որը զբաղեցնում է չնչին տարածք, հիմնականում համընկնում է համատարած անտառահատման (մինչև 75%) սահմանին:

Երկրորդ միջին դասի հրդեհավտանգ գոտին համընկնում է ինտենսիվ հատված տարածքներին:

Երրորդ ցածր դասը համընկնում է մասնակի հատված տարածքներին:

Չորրորդ և հինգերորդ անվտանգ դասերը համընկնում են չհատված անտառատարածքներին:

Ստացված տվյալները մի դեպքում փաստում են օգտագործված մեթոդով կազմված անտառահատման քարտեզի հավաստիությունը, իսկ մյուս դեպքում այն, որ անմիջական կապ գոյություն ունի մեր կողմից պատճառաբանված հրդեհավտանգությանը նպաստող գործոնների և անտառահատումների միջև:



Նկար 1.
Լոռու մարզի անտառահատման քարտեզ

Այսպիսով անտառահատումները և անտառային հրդեհները սերտորեն կապված են միմյանց հետ, համընկնում են անտառահատվածության առանձնացված խմբերը, հրդեհավտանգավորության դասերին, արտահայտում են մարդածին և բնական գործոնների համադրումը, դրա արդյունքում մեծ չափերի հասնող հողերի դեգրադացիային: Հետևաբան երկու գործոններն էլ ունեն կարևոր ազդեցություն հողերի դեգրադացիայի վրա:



Նկար 2. Լալվարի անտառտնտեսության հրդեհավտանգության դասերի քարտեզ սխեմա

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թադևոսյան Գ.Պ., Բնական պայմանների դերի գնահատումը հոսքագոյացման պրոցեսում (Դեբեդ գետի ջրհավաք ավազանի օրինակով), ատենախոսության սեղմագիր, Երևան, 2005, 3-22 էջ:
2. ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ., հունվար-հունիսին, Վանաձոր, 2015:
3. http://hayantar.am

EVALUATION OF FERTILIZATION AND FOREST FIRE INFLUENCE ON THE DEGRADATION OF RA LANDS (ON THE EXAMPLE OF LORI MARZ)

P.Davtyan, A.Hovhannisyan, Ye.Manukyan T.Davtyan, A.Vardanyan

YSU, qartez-geomorfolog@mail.ru

One of the important factors in ensuring sustainable development of the society is the development of agriculture, which provides the population with the first essential food products.